ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 հունիսի 2022թ. N 140-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Սերյոժայի Հունանյանի դիմումը (մուտք՝ 2021 թվականի հունվարի 27-ի N 202)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 36,7 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 36,7 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 32,63 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022Q0WYA1:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 15-րդ փողոց N 14:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Կարեն Սերյոժայի Հունանյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2022թ. N 141-Ա

«ԼԻԴԻԱՆ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հաշվի առնելով «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերության գործադիր տնօրեն Հ. Ալոյանի դիմումները (մտիցներ՝ 2022 թվականի հունիսի 15-ի N 913 և N 914)՝ **ո ր ո շ ու մ ե մ՝**

1. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը Ջերմուկ համայնքի ղեկավարի կողմից 2021 թվականի հունիսի 29-ին տրված N 14 և N 36 շինարարության թույլտվությունների գործողության ժամկետները երկարաձգել մեկուկես տարով:

2. «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 100 000 (հարյուր հազար) դրամ՝ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Լիդիան Արմենիա» ՓԲ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 հունիսի 2022թ. N 142-Ա

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Երևան քաղաքի բնակիչ Արմեն Արամի Վարդանյանի 2022 թվականի հունիսի 10-ի հայտը՝ (մտից N 902, 10.06.2022 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 32/3 հասցեում գտնվող սեփական հողամասում գտնվող բնակելի տանը կից օժանդակ շինություն կառուցելու համար նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման նպատակով Երևան քաղաքի բնակիչ Արմեն Արամի Վարդանյանին տալ նախագծման թույլտվություն:

2. Արմեն Արամի Վարդանյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արմեն Արամի Վարդանյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 15
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2022թ. N 143-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 12-ՐԴ ՇԵՆՔԻ ՀԱՐԵՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Գագիկ Օհանի Մանուկյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի հունիսի 15-ի N 923)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 12-րդ շենքի հարևանությամբ գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 51,8 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 51,8 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 101,1 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 2022V2VEXM:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը:

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք N 3/4:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Գագիկ Օհանի Մանուկյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 հունիսի 2022թ. N 144-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 23-Ի N 121-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, ինչպես նաև 34-րդ հոդվածին համապատասխան, հաշվի առնելով Երևան քաղաքի բնակիչ Ալիկ Սարգսի Սարգսյանի կողմից լիազորված Վ. Խաչատրյանի դիմումը (մտից N 939 16.06.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2022 թվականի մայիսի 23-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի N 3/1 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը օրինականացնելու մասին» N 121-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝ որոշման 1-ին կետում «2022PPRNCI» ծածկագիրը փոխարինել «2022GKQYKJ» ծածկագրով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 16
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2022թ. N 145-Ա

«ՋԵՐՄՈՒԿԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԵՆՑԱՂ-ՍՊԱՍԱՐԿՈՒՄ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՄԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 15րդ կետի և Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերության տնօրեն Հասմիկ Մարգարյանի դիմում-հայտը՝ ***ո ր ո շ ու մ եմ՝***

1. «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերությանը տալ 2022 թվականի ընթացքում Ջերմուկ համայնքի անվանումը ֆիրմային անվանման մեջ օգտագործելու թույլտվություն (Թույլտվություն N 62):

2. «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031716 հաշվեհամարին վճարել տարեկան 75 000 (յոթանասունհինգ հազար) դրամ տեղական տուրք:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Ջերմուկի Բնակչության Կենցաղ-Սպասարկում» ՍՊ ընկերությանը որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 հունիսի 2022թ. N 146-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N 467-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 22-ի N 91-Ա որոշմամբ, հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ավագանու «Ապրելու երկիր» խմբակցության ղեկավարի դիմումը (մտից N 947, 17.06.2022 թ.)՝ **որոշում եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի դեկտեմբերի 27-ի «Ջերմուկ համայնքի ավագանու մշտական հանձնաժողովների կազմը հաստատելու մասին» N 467-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն. նոր՝ հետևյալ խմբագրությամբ շարադրել որոշման 3-րդ կետը՝

«3. Հաստատել Ջերմուկ համայնքի ավագանու քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի հետևյալ կազմը՝

հանձնաժողովի նախագահ՝ Մխիթար Այվազյան

հանձնաժողովի նախագահի տեղակալ՝ Ազատ Հովակիմյան

հանձնաժողովի անդամներ՝ Արտուշ Սիմոնյան

Վարուժան Վահանյան

Սյուզաննա Ավետիսյան»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 17
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2022թ. N 147-Ա

ՀԱՆԳՈՒՑՅԱԼՆԵՐ ԳԱԼԻՆԱ ՍԱՖԱՐՈՎԱՅԻ ԵՎ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԱՖԱՐՈՎԻ ՎԵՐԱՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒՄԸ ԹՈՒՅԼԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 17-րդ կետով, «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 23-ի N 1910-Ն որոշմամբ սահմանված վերահուղարկավորման կարգով, հաշվի առնելով Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի բնակիչ, մահացածների հարազատ Կարինե Միխաիլի Գրիգորյանի դիմումը (մտից N 950, 17.06.2022 թ.) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի տարածքային մարմնի կողմից տրված վերահուղարկավորում իրականացնելու հնարավորության վերաբերյալ եզրակացությունը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Թույլատրել Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի գերեզմանատանը հուղարկավորված հանգուցյալներ Գալինա Սաֆարովայի և Հովհաննես Սաֆարովի (մահացած, համապատասխանաբար, 1999 և 1972 թվականներին) արտաշիրիմումը և վերահուղարկավորումը ՀՀ Կոտայքի մարզի Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի գերեզմանատանը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Աբովյան համայնքի Վերին Պտղնի գյուղի բնակիչ, մահացածների հարազատ Կարինե Միխաիլի Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2022թ. N 148-Ա

«ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով և համաձայն «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, ինչպես նաև հաշվի առնելով ՋՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/1 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ 15.06.2022թ.-ի N 2 և 17.06.2022թ.-ի N 3 արձանագրություններ՝ ***որոշումեմ***՝

1. Ջերմուկի համայնքապետարանի կարիքների համար շչակների կառավարման համակարգեր ձեռք բերելու նպատակով սույն թվականի հունիսի 3-ին կազմակերպված ՋՀ-ԷԱՃԱՊՁԲ-22/1 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի արդյունքում նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար դիմել լիազոր մարմնին՝ ներկայացված հայտում առկա անհամապատասխանությունները հրավերի պահանջների նկատմամբ օրենքով սահմանված ժամկետում չշտկելու պատճառով:

2. Հաստատել գործընթացի վերաբերյալ տեղեկությունները՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն տրամադրել լիազորված մարմնին և «ՍՄԱՐԹԼՈՋԻՍԹԻՔՍ» ՍՊԸ-ին:

4.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

20 հունիսի 2022թ. N 149-Ա

ԼԵՎՈՆ ՌՈՒԲԵՆԻ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Լևոն Ռուբենի Սարգսյանի կողմից լիազորված անձ Արծրուն Ռուբենի Մովսիսյանի դիմումը (մտից՝ N 886, 07.06.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքում գտնվող հասարակական նշանակության անշարժ գույքին նախկինում տրված հասցեի՝ ք. Ջերմուկ, Շահումյան փողոց 12, ճշտման նպատակով այն վերահասցեավորել՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Շինարարների փողոց N 1:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 հունիսի 20
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հունիսի 2022թ. N 150-Ա

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան՝ հաշվի առնելով Գարեգին Գառնիկի Գևորգյանի դիմումը (մտից՝ N 974, 23.06.2022 թ.) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղում գտնվող բնակելի կառուցապատման նշանակության անշարժ գույքին՝ Գառնիկ Արգամի Գևորգյանին, Ջուլիետա Ազատի Թորոսյանին, Գայանե, Գոռ, Գարեգին Գառնիկի Գևորգյաններին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Երևանյան խճուղի N 26/13:

2. Սույն որոշումը ենթակա է գրացման ՀՀ Կադաստրի կոմիտեի կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 23
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հունիսի 2022թ. N 151-Ա

ԱՐՏՈՒՇ ԷԴՎԱՐԴԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՕԳՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետով, «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ մասով՝ ***որոշում եմ՝***

1. Ս/թ հունիսի 27-ից Արտուշ Էդվարդի Սիմոնյանին նշանակել Ջերմուկ համայնքի ղեկավարի օգնական: Վարձատրությունը՝ ըստ համայնքի ավագանու կողմից 2022 թվականի հունվարի 11-ի N 2-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 24
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հունիսի 2022թ. N 152-Ա

Տ. Ժ. ԱՐՏԱՇԵՍՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ (ՏՆԱՄԵՐՁ) ՀՈՂԱՄԱՍՆ ԸՆԴԼԱՅՆԵԼՈՒ ԵՎ ԱՅԴ ՆՊԱՏԱԿՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետերին, Ջերմուկ համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 16-ի «Ջերմուկ համայնքի սեփականությունը հանդիսացող հողամասերը օրենսդրության պահանջներին համապատասխան ուղղակի վաճառքով օտարելու կամ վարձակալության տրամադրելու մասին» N 21-Ա որոշման համապատասխան, հաշվի առնելով Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, Ջերմուկ քաղաքի փաստացի բնակիչ Տ. Ժ. Արտաշեսյանի դիմումը (մտից N 876, 06.06.2022 թ.) ***որոշում եմ***՝

1. Ռուսաստանի Դաշնության քաղաքացի, Ջերմուկ քաղաքի փաստացի բնակիչ Տիգրան Ժորայի Արտաշեսյանին սեփականության իրավունքով պատկանող Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 19 հասցեում գտնվող սեփական բնակելի տան սպասարկման հողամասը (մակերեսը՝ 511,7 քմ) ընդլայնել. այդ նպատակով ուղղակի վաճառքով Տ. Ժ. Արտաշեսյանին օտարել Գնդեվազ գյուղի 5-րդ փողոցի N 19/1 հասցեում գտնվող 82,9 (ութսուներկու ամբողջ ինը տասնորդական) քմ մակերեսով հարակից համայնքային սեփականության հողամասը՝ միավորված գույքին տրամադրելով հետևյալ հասցեն՝ *Ջերմուկ համայնք, գյուղ Գնդեվազ, 5-րդ փողոց N 19*:

2. Սույն որոշման առաջին կետում նշված 82,9 քմ հողամասի վաճառքի գինը կազմում է 65660 (վաթսունհինգ հազար վեց հարյուր վաթսուն) դրամ՝ ըստ կադաստրային արժեքի:

3. Սույն որոշման առաջին կետում նշված հողամասի օտարման համար Տ. Ժ. Արտաշեսյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Տ. Ժ. Արտաշեսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հունիսի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հունիսի 2022թ. N 153-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ 10-002-0415-0013 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածին համապատասխան, հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2022 թվականի հունիսի 27-ի N 5 արձանագրությունը՝ ***ո ր ո շ ու մ եմ***՝

1. Հաստատել գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով 2022 թվականի հունիսի 27-ին կայացած Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի 10-002-0415-0013 կադաստրային ծածկագրով գյուղատնտեսական նշանակության հողամասի (հողատեսքը՝ այլ), մակերեսը՝ 1,8881 (մեկ ամբողջ ութ հազար ութ հարյուր ութսունմեկ տասհազարերորդական) հա, օտարման աճուրդի արդյունքները և հիմք ընդունելով հողամասն աճուրդով վաճառելու մասին Ջերմուկի համայնքապետարանի՝ համայնքի տարածքում հողերի օտարման աճուրդային հանձնաժողովի 2021 թվականի հունիսի 28-ի N 5 արձանագրությունը՝ N 1 լոտով աճուրդի հանված 10-002-0415-0013 կադաստրային ծածկագրով հողամասը 172 500 (հարյուր յոթանասուներկու հազար հինգ հարյուր) դրամով վաճառել աճուրդում առավելագույն գին առաջարկած մասնակից ***«Նպտուրալ Ջերմուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը***՝ ի դեմս լիազորված անձ Արծրուն Ռուբենի Մովսիսյանի:

2. Սույն որոշման առաջին կետում նշված գումարի վճարման հաշվեհամարն է՝ 900365031625:

3. ***«Նպտուրալ Ջերմուկ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության*** հետ օրենքով սահմանված կարգով կնքել սույն որոշման առաջին կետում նշված հողամասի առուվաճառքի պայմանագիր:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**